Ե՛ ՏԱՐԻ ԹԻՒ 1354 — ՀԻՆԳՇԱԲԹԻ 7 ՅՈՒԼԻՍ 1888 — (Ն. Տ.) 19 ՅՈՒԼԻՍ 1888 — 9 ԶԻԼԳԱՏԷ 1305

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ՆԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 7 ՅՈՒԼԻՍ, 1888

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՃԻՉ ՄԸ ՎԱՏԻԿԱՆԷՆ

Ի՞նչ հակապատկեր. Այն Հռոմէն ուստից հրամաններ միայն կ'արձակուէին երբեմն, յուսահատ ճիչեր կը լսուին այժմ. Պապը մեծ տագնապի մէջ է. Լեւոն ԺԳ Պիոս Թ չէ՛. Պարապ տեղը չի յուզուիր. Չափաւոր, խոհեմ, չնչին հայեաց քաղաքագէտ է. Ուրեմն, երբոր Պապութեան համար իրօք անհանդուրժելի վիճակ մը առած պէտք է լինին, որպէս զի Լեւոն ԺԳ ձայն բարձրացնէ, և Պապութեան եղած «անիրաւութեանց» դէմ բողոք բառնայ. «Յաւիտենական» քաղաքին մէջ, ուր «Սրբոյն Պետրոսի Աթոռը» կը յուսար յաւիտենական լինել, պապական գահը կ'երերայ, ժամանակակից ազատական և քաղաքակրթական հոսանքէն տարուբերեալ. Չնչին իշխանութիւն հեռաւոր աշխարհներու մէջ տարածել ջանացող Պապն իւր մայրաքաղաքին մէջ իսկ ապահովութիւն չի տեսներ այսօր. Իւր վրայ ճնշող աշխարհական իշխանութեան դէմ կը բողոքէ. կը գրէ, կը բողոքէ Լեւոն ԺԳ, յուսալով քաղաքակիրթ աշխարհն ոտք հանել իտալեան Տէրութեան դէմ. Աւելորդ է ըսել թէ այս յոյս իրականութիւն չի գտներ, և գրտ-

[…]

եան հայրենասիրութեան յայտարարեց թէ իտալեան ազգն իւր սեփական իրաւունքներէ բան չի կրնար զոհել Պապին, և մինչեւ իսկ կարգ մը օրէնսդրական միջոցներ ձեռք առաւ զօրս Պապն իւր իրաւանց, առանձնաշնորհ-

[…]

քական զօրութիւնն ու ազդեցութիւնն, ամեն իրականութենէ մերկացեալ, լոկ ստուեր մ'են այլ եւս. և Վատիկանէն լսուող ճիչերը ցոյց կուտան թէ Լեւոն ԺԳ ունայն ճիգ մը կ'ընէ սահող անհետացող ստուերի մը կառչելու.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մաճառաստանի պետական երկաթուղեաց Տնօրէնութիւնն օգոստ. 1 ին առեւտրական գործակալութիւն մը պիտի բանայ Պելկրատի մէջ, Սերպիոյ եւ Արեւելեան Եւրոպիոյ հետ Մաճառաստանի առեւտուրն յառաջ տանելու համար.

—Անցեալ շաբթուն Վիեննայի արմոտեաց սակարանին մէջ գիներն ինկան, որովհետեւ Մաճառաստանէն առնուած

[…]

գրելի չէր բնաւ.

—Ի Գահիրէ բնիկ Եգիպտացի մը կայ եղեր այս միջոցիս՝ հարիւր քսան երեք տարեկան, քաջառողջ և գործունեայ, և իւր առօրեայ գործն ինք կը վարէ եղեր. Անցեալ տարի հազիւ քսան երկու տարեկան կին մը առեր է.

## ԱՅՍ ԱՒՈՒՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՄՐՏԱՅՈՅՁ ՏԵՍԱՐԱՆՆ Ի ՎԻՍՊԱՏԸՆ

Վիսպատըն, 14 յուլիս. —Վիլհէլմ Կայսր վեց օր առաջ հեռագիր մը ղրկած էր Նաթալի Թագուհւոյն, խնդրելով որ զաւակն յանձնէ Սերպիոյ Թագաւորին կողմէ լիազօր իշխանութիւն ունեցող պաշտօնատարին. Թագուհին պատասխանած էր թէ իւր զաւակն ինք անձամբ պիտի յանձնէ Միլան Թագաւորին. Թագուհին այս առաջին հեռագրէ յետոյ մի քանի հեռագրեր եւս ղրկած էր Վիլհէլմ Կայսեր, որ չէր պատասխանած. Նաթալի Թագուհին, հեռա-

[…]

նած էր. «Օր մ'իսկ չպիտի մնայ այլ եւս.»

Յուլիս 12ի երեկոյն Վիսպատընի ոստիկանութեան տնօրէնը, Պ. Ֆոն Ռայնպատըն, Նաթալի Թագուհւոյն ներկայանալով, ծանոյց թէ հետեւեալ օրը միջօրէէն երկու ժամ յառաջ պիտի գան առնուլ իւր որդին. Թագուհին փորձեց Վիսպատընէ փախչիլ, իւր զաւկէն չզատուելու համար. բայց երկաթուղեաց տնօրէնութիւնը չուզեց Թագուհւոյն տրամադրութեան ներքեւ դնել յատուկ կառախումբ մը զոր նա յանձնարարած էր, չորոշելով թէ ո՛ւր պիտի երթար կառախումբը. Բոլոր գիշերը, Թագուհւոյն բնակած ապարանքը գաղտնի ոստիկանութեան գործակալաց հսկողութեան ներքեւ

[…]

—)( 66 )(—



## ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ

### ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Աստղիկ ուսմպ մը կ'առնէ ջրի գաւաթէն եւ հազիւ հանդարտած այդ պատահական հաչէն, այժմ իւր սեփական հազն է որ կը նեղէ զինք թեթեւիկ ու մեղմիկ. կը քրտնի եւ դառն ժպտով կ'ըսէ նուաղկոտ ձայնիւ. «Հիմա ալ ջուր չե՞ս տար, մայրիկ....»

Հէգ մայրն որ բնաւ օր մը իւր աղ-

[…]

ճչելով, աղերսարկու ակն արկներ կ'ուղղէ վարժապետին ու իւր կնոջ որպէս զի ընփոփեն իւր տիրուհին. ա՛հ կը զգայ, կը հասկնայ հէգ կենդանին, բան մ'ունի նա, կը կարեկցի, կը վշտակցի...

[…]

